ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ...14... 2.10.17թ

«Հրազդան» ՊՈԱԿ-ը, այսուհետ «Վաճառող», ի դեմս «Հրազդան» ՊՈԱԿ [illegible] [illegible] Ավետիք Աղամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և [illegible] այսուհետ «Գնորդ», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N1 հավելվածով տեխնիկական բնութագրերով նախատեսված վառելափայտ(այսուհետև Ապրանք),իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2.Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողը Ապրանքը մատակարարում է պայմանագրով նախատեսված ծավալներով ժամկետներում և վայրում:

3.Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1.Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝սույն պայմանագրի 1.1 կետում նշված պայմաններին չհամապատասխանող Ապրանք.

ա/չընդունել ապրանքն՝իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ:

բ/հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա/պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը

բ/հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը:

3.1.4.Եթե հանձնվել է տեսականու պայմանի խախտմամբ Ապրանք ,իր ընտրությամբ

ա/պահանջել տեսականու վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի փոխարեն սույն պայմանագրով նախատեսված տեսականուն համապատասխան Ապրանքով

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքի այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

3.1.7.Միակողմանի լուծել սույն պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե վաճառողը էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

3.1.7.1.Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում ,եթե`

ա/մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ/բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:

3.2.Գնորդը պարտավոր է`

3.2.1.Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունման ապահովման բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2.Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել վաճառողին:

3.2.3.Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում,ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.4.Սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքը ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում` նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.5.Ապրանքի քանակի,տեսականու , որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց անմիջապես կամ այն բանից հետո`ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ` ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3.Վաճառողն իրավունք ունի `

3.3.1.Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2.Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը գնորդի կողմից պարտավորությունների խախտման հետևանքով պայմանագրի լուծումից հետո`ողջամիտ ժամկետում,այլ անձի Պայմանագրով նախատեսված ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք` համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3.Գնորդից պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4.Միակողմանի լուծել Պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Գնորդն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

3.3.5.Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.4.Վաճառողը պարտավոր է`

3.4.1.Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում.

3.4.2.Սույն պայմանագրի 2.1 կետին համապատասխան Ապրանքը Գնորդին մատակարարել վերջինի հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3Ապահովել ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2ա/ և 3.1.5 կետերին համապատասխան Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.5Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.6.Գնորդին/Ստացողին/ հանձնել սույն Պայմանագրի N1 հավելվածով նախատեսված որակի Ապրանք Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում , իսկ Գնորդի Ստացողի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.7.Հետ տանել Գնորդի/Ստացողի/ կողմից սույն պայմանագրի 3.2.3. կետին համապատասխան պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինության, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու. այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8.Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տույժը և տուգանքը:

4.Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1.Սույն պայմանագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է յուրաքանչյուր խմ դիմաց ........2400.0.............................դրամ ըստ հավելված N2 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ........480000.............................. դրամ:

4.2.Գնորդն իրեն հանձնաց Ապրանքների դիմաց վճարումը կատարում է դրամական միջոցները վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:Ապրանքների դիմաց դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ այն երկկողմ հաստատելու պահից 20 բանկային օրվա ընթացքում:

4.3.Սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների տատանման պայմաններում տատանումը կազմում է ավելի քան 10% կողմերը իրավունք ունեն վերանայել Պայմանագրով նախատեսված Ապրանքի գինը՝ պայմանով,որ վերանայված գինը պետք է 10% -ով ցածր լինի շուկայական գներից:

5.Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի պետական ստանդարտի և Պայմանագրի պահանջներին:

6.Ապրանքի հանձնումն և ընդունումը

1.Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդի կողմից որոշված Ստացողին՝ Գնորդի ներկայացուցչի մասնակցությամբ, Պայանագրով նշված ծավալներով և ժամկետներում:

6.1.1.Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

6.2.Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը ընդունելու պատճառաբանված մերժումը:

6.3.Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու/հաստատելու/ պահից:

7.Կողմերի պատասխանատվությունը

7.1.Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված `մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2. Գնորդը պատասխանատվություն է կրում Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետների խախտման համար:

7.3.Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից,եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3/երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9.Այլ պայմաններ

9.1.Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում տվյալ գնման ընթացակարգը և Պայմանագիրը գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխանելու հանգամանքը հավաստող լիազոր մարմնի դրական եզրակացության պահից, և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

9.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ` նոր համաձայնագիր կնքելու միջոցով,որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.3.Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

9.4.Սույն պայմանագիրը կազմված է 2 թերթից հայերենով, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:Պայմանագրի N1 և 2 հավելվածները բաղկացած են մեկ թերթից,որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

10.Կողմերի հասցեները և ստորագրությունները.

ՎԱՃԱՌՈՂ` ,,Հայանտառ,, ՊՈԱԿ

,,Արծվաբերդի անտառտնտեսություն,,

մասնաճյուղ

,,ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ

ՓԲԸ-ի ,,Բերդ,, մասնաճյուղ

Հ/Հ 2202851400578100 ՀՎՀՀ 02512343

ՏՆՕՐԵՆ Ա.ՄԴԱՄՅԱՆ

ԳՆՈՐԴ` Բերդի պետական քոլեջ ՊՈԱԿ

ՀՀ ԿԳ Նախ. ԳԲ

հ/հ 2477800820270000

հ/կ 07801286

ՏՆՕՐԵՆ

Ա7355876286

Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ

## Հարկային հաշիվ
(ապրանքների մատակարարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 6 | Հոկտեմբեր | 2017 թ. | Ա | 7355876286 |

| [4] Մատակարարման ամսաթիվ | | | Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») | հատուկ |
|---|---|---|---|---|
| 6 | Հոկտեմբեր | 2017 թ. | | |

| Ճշգրտվող հաշվի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | 2 Հոկտեմբեր, 2017 թ. | 14 |

| | |
|---|---|
| [7] | |
| [8] | |
| [9] | |

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)
„Արծվաբերդի անտառտնտեսություն„ մ/ճ. Բերդի ա/պ. անտառհատման տոմս 00766

### Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի

| | |
|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 2 5 1 2 3 4 3 |
| [12] Անվանումը | «ՀԱՅԱՆՏԱՌ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 2 5 1 2 3 4 3 / 1 |
| [14] Բանկային տվյալները | Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ ՓԲԸ Բերդ մ/ճ. — N 220285140053000 |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ Արմենակյան 129 |
| [16] Վայրը, որտեղից ապրանքները մատակարարվում են | „Արծվաբերդի անտառտնտեսություն„ մ/ճ. բ.Բերդ |
| [17] Լրացուցիչ տվյալներ | |

### Ապրանքներ ձեռք բերող անձի

| | |
|---|---|
| [18] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 7 8 0 1 2 8 6 |
| [19] Անվանումը | ՀՀ ԿՐԹ.ԵՎ ԳԻՏ.ՆԱԽ.ԲԵՐԴԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| [20] Բանկային տվյալները | ԱՇԻԲ Տավուշի մ/ճ. — N 2477800820270000 |
| [21] Գտնվելու վայրը (հասցեն) | ԲԵՐԴ Մաշտոց 2 |
| [22] Լրացուցիչ տվյալներ | |

| [23] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

| | |
|---|---|
| [24] Ապրանքների մատակարարման (առաքման) եղանակը | Ռիբալ 672 OL 64 |
| [25] Մատակարարվող (առաքվող) ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | բ.Բերդ |

[26] Մատակարարվող ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ապրանքի անվանումը | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | վառելափայտ | խմ | 10 | 20000 | 200000 | 20 | 40000 | 240000 | |
| Ընդամենը | | | | | 200000 | X | 40000 | 240000 | |

Դուրս գրող՝ ADAMYAN AVETIK 2009580322
անունը, ազգանունը

Ստացող
պաշտոնը — ստորագրությունը — (անունը, ազգանունը)
պաշտոնը — ստորագրությունը — (անունը, ազգանունը)

06/10/2017 13:06:21

Հավելված 4
<< 02>> <<հոկտեմբերի >> 2017թ. կնքված
N 14 *գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ
Հայանտառ ՊՈԱԿ Արծվաբերդի անտառտնտեսություն մ/ճ
Գտնվելու վայրը ք. Բերդ
հհ 220285140053000
հվհհ 02512343

Պատվիրատու
<<Բերդի պետական քոլեջ>> ՊՈԱԿ
Գտնվելու վայրը ք. Բերդ Մաշտոցի 2
Հհ 2477800820270000
Հվհհ 07801286

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*06 հոկտեմբերի 2017թ*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Վառելափայտի գնման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__02__» հոկտեմբերի 2017 թ.
Պայմանագրի համարը՝ 14
Պատվիրատուն՝ ի դեմս տնօրեն՝ Լ. Գրիգորյանի և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս տնօրեն Ա. Աղամյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «___» 2017 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Վառելափայտ | Վառելիքի համար նախատեսված փայտ | 10խմ | 10խմ | IV եռամսյակ | 06,10,2017 | 240.0 | IV եռամսյակ |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
ստորագրություն
Ա. Աղամյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
ստորագրություն
Լ. Գրիգորյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 4.1
<<02 >> <<հոկտեմբերի >> 2017 թ. կնքված
N 14 *գնման պայմանագրի*

# ԱԿՏ N 1

## պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ <<Բերդի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և Հայանտառ ՊՈԱԿ Արծվաբերդի մ/ճ -ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2017 թ. հոկտեմբերի 02 -ին կնքված N 14 գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2017թ. հոկտեմբերի 06 -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| Վառելափայտ | 10 | խմ |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

ներկայացուցիչ

/Ա. Աղամյան/
ազգանուն, անուն

ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած

/Լ. Գրիգորյան/
ազգանուն, անուն

ստորագրություն

U3635669829

Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ

## Հարկային հաշիվ
(ապրանքների մատակարարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 9 | Հոկտեմբեր | 2017 թ. |
| **[4] Մատակարարման ամսաթիվ** | | |
| 9 | Հոկտեմբեր | 2017 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Ա | 3635669829 |

Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») | հատուկ

| Ճշգրտվող հաշվի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | 2 Հոկտեմբեր, 2017 թ. | 14 |

[7]

[8]

[9]

**[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)**

,,Արծվաբերդի անտառտնտեսություն,, մ/ճ. Բերդի ա/պ. անտառհատման տոմս 00766

### Ապրանքներ մատակարարող (առաքող) անձ

| | |
|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 2 5 1 2 3 4 3 |
| [12] Անվանումը | «ՀԱՅԱՆՏԱՌ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 2 5 1 2 3 4 3 / 1 |
| [14] Բանկային տվյալները | Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ ՓԲԸ Բերդ մ/ճ. — N 220285140053000 |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ Արմենակյան 129 |
| [16] Վայրը, որտեղից ապրանքները մատակարարվում են | ,,Արծվաբերդի անտառտնտեսություն,, մ/ճ. ք.Բերդ |
| [17] Լրացուցիչ տվյալներ | |

### Ապրանքներ ձեռք բերող անձ

| | |
|---|---|
| [18] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 7 8 0 1 2 8 6 |
| [19] Անվանումը | ՀՀ ԿՐԹ.ԵՎ ԳԻՏ.ՆԱԽ.ԲԵՐԴԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| [20] Բանկային տվյալները | ԱՇԻԲ Տավուշի մ/ճ. — N 2477800820270000 |
| [21] Գտնվելու վայրը (հասցեն) | ԲԵՐԴ Մաշտոց 2 |
| [22] Լրացուցիչ տվյալներ | |

| [23] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

| | |
|---|---|
| [24] Ապրանքների մատակարարման (առաքման) եղանակը | ՈՒրալ 672 OL 64 |
| [25] Մատակարարվող (առաքվող) ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ք.Բերդ |

**[26] Մատակարարվող ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը**

| N | Ապրանքի անվանումը | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | վառելափայտ | խմ | 10 | 20000 | 200000 | 20 | 40000 | 240000 | |
| Ընդամենը | | | | | 200000 | X | 40000 | 240000 | |

Դուրս գրող՝ ADAMYAN AVETIK 2009580322
անունը, ազգանունը

Ստացող
պաշտոնը | ստորագրությունը | (անունը, ազգանունը)
պաշտոնը | ստորագրությունը | (անունը, ազգանունը)

09/10/2017 12:03:16

Հավելված 4
<< 02>> <<հոկտեմբերի >> 2017թ. կնքված
N 14 գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ
Հայանտառ ՊՈԱԿ Արծվաբերդի անտառտնտեսություն մ/ճ
Գտնվելու վայրը ք. Բերդ
հհ 220285140053000
հվհհ 02512343

Պատվիրատու
<<Բերդի պետական քոլեջ>> ՊՈԱԿ
Գտնվելու վայրը ք. Բերդ Մաշտոցի 2
Հհ 2477800820270000
Հվհհ 07801286

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*09 հոկտեմբերի 2017թ*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Վառելափայտի գնման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__02__» հոկտեմբերի 2017 թ.
Պայմանագրի համարը՝ 14
Պատվիրատուն՝ ի դեմս տնօրեն՝ Լ. Գրիգորյանի և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս տնօրեն Ա. Աղամյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «___» 2017 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազ դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Վառելափայտ | Վառելիքի համար նախատեսված փայտ | 10խմ | 10խմ | IV եռամսյակ | 09,10,2017 | 240.0 | IV եռամսյակ |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
ստորագրություն
Ա. Աղամյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
ստորագրություն
Լ. Գրիգորյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 4.1
<<02 >> <<հոկտեմբերիի >> 2017 թ. կնքված
N 14 *գնման պայմանագրի*

# ԱԿՏ N 2

**պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնել ու փաստը ֆիքսել ու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ <<Բերդի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և Հայանտառ ՊՈԱԿ Արծվաբերդի մ/ձ -ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2017 թ. հոկտեմբերի 02 -ին կնքված N 14 գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2017թ. հոկտեմբերի 09 -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| Վառելափայտ | 10 | խմ |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

ներկայացուցիչ

/Ա. Աղամյան/

ազգանուն, անուն

ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած

/Լ. Գրիգորյան/

ազգանուն, անուն

ստորագրություն